պէ, ուր ծերունի քահանայ մը կայ իր զաւկին մօտ հիւրաբար, ամբողջ Յուկօսլաւիոյ մէջ ոչ մէկ քահանայ կամ ազգային պաշտօնեայ կայ։

9.— Անգլիոյ հայաբնակ քաղաքներն են Լոնտոն, Մանչէսթր, Սաութ Բօրթ եւ Լիվըրփուլ։ Առաջինին մէջ կան իբր 800, իսկ միւսներուն մէջ շուրջ 500 Հայեր։ Լոնտոնի մէջ ունինք հայաբնակ գեղեցիկ եկեղեցի մը, յարակից երիցատունով միասին։ Թէեւ Պ. Գալուստ Կիւլպէնկեանի կողմէ կառուցուած է ան եւ կը մատակարարուի իր կողմէ, բայց ամբողջովին յատկացուած է ժողովուրդին հոգեւոր պէտքին։ Իբրեւ ազգային վարչութիւն, տակաւին չը կայ ոչ մէկ մարմին. գոյութիւն ունին միայն Տիկնանց Միութիւն մը եւ աղքատախնամ մը. Եկեղեցին ունի իր քահանան, որ եկեղեցւոյ Բարերարէն կ՚ընդունի իր ապրուստը, բայց կը ծառայէ ամբողջ ժողովուրդին։ Մանչէսթրի մէջ, որ մեր Եւրոպահայ ամէնէն հին եւ կազմակերպեալ գաղութներէն մին է, ունինք ազգապատկան եկեղեցի, ազգային վարչութիւն, երեսփոխանական դրութեամբ, որուն կանդամակցին կիներ ալ, աղքատախնամ են. Հոգեւոր Հովիւն է Տ. Ղեւոնդ Եպս.։ Կրթական որեւէ ձեռնարկ չկայ ոչ Լոնտոն եւ ոչ Մանչէսթր։ Սաութ Բօրթ եւ Լիվըրփուլ կը հովուուին Մանչէսթրի եկեղեցիէն։

ԱՆԿԵՂԾԸ

Մի՛ վախենար դուն մարդէն անկեղծ.
Ուրիշները ի՛նչ ալ խօսին,
Դուն զայն յարգէ սիրով մ՚անեղծ.
Ծուռ կը թռչին խօսքերը սին։

Տէրը եղիր խօսքիդ ճիշդ,
Հեշդ է Տէրը ո՛ւր որ դառնաս.
Չարը չունի ճշդ նպատակ,
Ծուռ կ՚անցնի ան եւ իր վրնաս։

Թէ խիստ է ան եւ մերթ խածուն,
Բարի է բայց, չի պահեր քէն.
Ան կը խօսի սրտով բոլոր
Չարէն, սուտէն եւ կեղծիքէն։

ԲԱԿ

ՊՕՂՈՍ ՓԱՇԱ ՆՈՒՊԱՐ

Հաճոյքով կը զարդարենք ՍԻՈՆի սիւնակները պատմական եւ հոգեբանական այն վերլուծումներով, որոնց մէջ Եգիպտոսի Հայոց Թեմի Առաջնորդը, Գեր. Տ. Թորգոմ Սրբազան, պատկերացուցած է հայ ժողովուրդի Մեծ Զաւկին, ողբացեալ Վսեմ. Պօղոս Փաշա Նուպարին նկարագիրը, 1930 Յուլիս 1, կիրակի օր, Գահիրէի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ ներքին Առաջնորդարանին մէջ, Հ. Բ. Ը. Միութեան նախաձեռնութեամբ կարգադրուած համազգային Յիշատակի հանդէսին առթիւ։

Խմբգր.

Ականաւոր Հայը, որուն մահը կ՚ողբայ այսօր ամբողջ ազգը, մեր ժողովուրդին ժամանակակից ամէնէն պատկառելի եւ բացառիկ արժէք ներկայացնող դէմքերէն մին եղաւ։

Մեծ էր ան իր ծագումով, իր ծնունդով, իր կեանքով եւ իր գործերով։

Ծագումով. որովհետեւ տոհմիկ շառաւիղն էր իշխանական տունի մը, որ բախտը Սիւնեաց խորոտ լեռներէն փոխադրեր էր յոնիական ափերուն վրայ, Զմիւռնիոյ նորակազմ հայ գաղութին մէջ փայլեցնելու համար իր ցեղական ձիրքերը։

Ծնունդով. որովհետեւ զաւակն էր պետական մեծ վերանորոգիչի մը, որ, ԺԹ. դարուն, Բագրատունեաց փլուզումէն ետքը, Եգիպտոս եկած եւ հին հայ Նախարարական տուներու պատկանող քաղաքական եւ զինուորական գործիչներուն նման, անոնցմէ ութը դար յետոյ, նորէն աւելի բարձր աստիճանի մը վրայ թերեւս պանծացուցեր էր իր ցեղը, միջազգային ուշադրութեան ու պատմութեան յանձնելով Հայ անունը։

Կեանքով. որովհետեւ անհատներու կենսագրութեան մէջ դուն ուրեք կարելի է տեսնել որ պատուոյ մէջ եւ դիրքերու վրայ յառաջդիմութիւնը զուգընթաց եղած ըլլայ զուտ անձնական արժանիքի եւ աշխատութեան, այնպէս՝ ինչպէս կը հաստատուի իրենին մէջ։ Իր դէմքը կը կնճռոտէր, կ՚ըսեն, երբ կ՚ուզէին պատուել զինքը իբրեւ Նախարարապետի որդի։ Վասնզի կը խորհէր, անշուշտ իրաւամբ մի-

digitised by A.R.A.R.@